ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան 16.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/64

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.10.2017թ. թիվ 03/26-3/18255-17 գրությամբ «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև՝ Պատվիրատու) 03.10.2017թ. թիվ ԴՎԱ/3398 գրության հիման վրա, 09.10.2017թ. թիվ 03/26-3/18255-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 10.10.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/[1181247]-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետև՝ Ընկերություն):

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 12.10.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/6» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգին (այսուհետև՝ Ընթացակարգ):

Այնուհետև 04.09.2017թ. ժամը 16:48-ին «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն info@armeps.am էլեկտրոնային հասցեից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ստացել է ծանուցում, առ այն որ Ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում թիվ 4-8-րդ չափաբաժինների մասով հանձնաժողովի կողմից 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն և որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը հայտնել է, որ «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն վերը նշված պարտավորությունը սահմանված կարգով և ժամկետում կատարել է, այն է՝ 07.09.2017թ. էլեկտրոնային նամակով Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ուղարկել է Ընթացակարգի հրավերում նշված՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային հասցեին:

Այնուհետև, Պատվիրատուից չստանալով նամակի ստացման հաստատում, և մտածելով որ նամակում կցված ֆայլերի մեծ տարողունակության պատճառով կարող էր նամակը չհասնել Պատվիրատուին, 08.09.2017թ. Ընկերությունը ևս մեկ անգամ ուղարկել է վերոհիշյալ պարունակությամբ նամակը, սակայն արդեն փաստաթղթերի փոքրացված ծավալով:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել որևէ խախտում և որ Պատվիրատուին փաստաթղթերը օրենքով սահմանված ժամկետում չհասնելը տեխնիկական խնդրի արդյունք է եղել, ավելացնելով, որ Ընկերությունը հայտերը բացումից հետո չի հրաժարվում գնման գործընթացի հետագա մասնակցությունից և պատրաստակամ է կնքել պայմանագիր թիվ 4-8-րդ չափաբաժինների մասով և բարեխղճորեն կատարել պայմանագրով նախատեսված մատակարարումները՝ ըստ պայմանագրով սահմանված ժամանակացույցի:

Ընկերությունը վերը նշված գրությանը կից Խորհրդին է ներկայացրել Ընկերության՝ էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 07.09.2017թ. և 08.09.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.10.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, Ընկերության լիազորված ներկայացուցիչը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է գրությամբ Խորհրդին ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկ-ները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 03.10.2017թ. թիվ ԴՎԱ/3398 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի թիվ 5-8-րդ չափաբաժինների մասով «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով Ընկերությունը «armeps» էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը Ընթացակարգի թիվ 5-8-րդ չափաբաժինների մասով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.10.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է 03.10.2017թ. թիվ ԴՎԱ/3398 գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/64 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/64 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.08.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 3.2 կետով արձանագրել է, որ «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի կողմից թիվ 4-րդ չափաբաժնով ներկայացված գնային առաջարկում տառերով գրված գինը սխալ է, ուստի վերջինիս գնային առաջարկը 4-րդ չափաբաժնի մասով մերժվել է գնահատող հանձնաժողովի որոշմամբ, իսկ 5-8-րդ չափաբաժնով «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն ճանավել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

3. Նույն արձանագրության 4.2 կետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4. Պատվիրատուն 04.09.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ վերջինս «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/6» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում 5-8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ

զբաղեցնող մասնակից և պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ Ընկերության որակավորման համապատասխան փաստաթղթերը գնումները համակարգողի էլեկտրոնային փոստին ուղարկելու ճշգրիտ ամսաթիվը գնահատող հանձնաժողովը չէր կարողանում որոշել, ուստի գնահատող հանձնաժողովը դիմել է ՀՀ ՋՈՒ կապի վարչությանը՝ վերը նշված խնդրի վերաբերյալ համապատասխան մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով: ՀՀ ՋՈՒ կապի վարչության 28.09.2017թ. մասնագիտական եզրակացության համաձայն՝ «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի կողմից գնումների համակարգողի՝ t.abrahamyan@mil.am, հասցեին ուղղված նամակը ՀՀ ՊՆ mil.am սերվերում գրանցվել է 08.09.2017թ. ժամը 18:45:10-ին, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը մերժվել է, քանի որ «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը:

6. «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն 12.10.2017թ. գրությամբ հայտնել է, որ սահմանված կարգով և ժամկետում, այն է՝ 07.09.2017թ. էլեկտրոնային նամակով Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ուղարկել է Ընթացակարգի հրավերում նշված՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային հասցեին: Այնուհետև, Պատվիրատուից չստանալով նամակի ստացման հաստատում, և մտածելով, որ նամակում կցված ֆայլերի տարողունակության պատճառով կարող էր նամակը չհասնել Պատվիրատուին, 08.09.2017թ. Ընկերությունը ևս մեկ անգամ ուղարկել է վերոհիշյալ պարունակությամբ նամակը:

Ընկերությունը վերը նշված գրությանը կից Խորհրդին է ներկայացրել Ընկերության՝ nune@compserv.am, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 07.09.2017թ. և 08.09.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումները:

5. **Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը**

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.10.2017թ. թիվ 03/26-3/18255-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 03.10.2017թ. թիվ ԴՎԱ/3398 գրությունը՝ կից փաստաթղթերով, Ընկերության՝ nune@compserv.am, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 07.09.2017թ. և 08.09.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենքի) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները),

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային

օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 8.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը*** և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝***

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.08.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 3.2 կետով արձանագրել է, որ «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի կողմից թիվ 4-րդ չափաբաժնով ներկայացված գնային առաջարկում տառերով գրված գինը սխալ է, ուստի վերջինիս գնային առաջարկը 4-րդ չափաբաժնի մասով մերժվել է գնահատող հանձնաժողովի որոշմամբ, իսկ 5-8-րդ չափաբաժնով «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն ճանավել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 4.2 կետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Պատվիրատուն 04.09.2017թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/6» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում 5-8-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և պարտավորվում է սույն ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.09.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ Ընկերության որակավորման համապատասխան փաստաթղթերը գնումները համակարգողի

էլեկտրոնային փոստին ուղարկելու ճշգրիտ ամսաթիվը գնահատող հանձնաժողովը չէր կարողանում որոշել, ուստի գնահատող հանձնաժողովը դիմել է ՀՀ ՋՈՒ կապի վարչությանը՝ վերը նշված խնդրի վերաբերյալ համապատասխան մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով: ՀՀ ՋՈՒ կապի վարչության 28.09.2017թ. մասնագիտական եզրակացության համաձայն՝ «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի կողմից գնումների համակարգողի՝ t.abrahamyan@mil.am, հասցեին ուղղված նամակը ՀՀ ՊՆ mil.am սերվերում գրանցվել է 08.09.2017թ. ժամը 18:45:10-ին, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը մերժվել է, քանի որ «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը:

«Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն 12.10.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ սահմանված կարգով և ժամկետում, այն է՝ 07.09.2017թ. էլեկտրոնային նամակով՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ուղարկել է Ընթացակարգի հրավերում նշված՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային հասցեին: Այնուհետև, Պատվիրատուից չստանալով նամակի ստացման հաստատում, և մտածելով, որ նամակում կցված ֆայլերի տարողունակության պատճառով կարող էր վերջինս չհասնել Պատվիրատուին, 08.09.2017թ. Ընկերությունը ևս մեկ անգամ ուղարկել է վերոհիշյալ պարունակությամբ նամակը:

Ընկերությունը վերը նշված գրությանը կից Խորհրդին է ներկայացրել Ընկերության՝ nune@compserv.am, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 07.09.2017թ. և 08.09.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումները:

Այսպիսով, Խորհուրդն ուսումնասիրելով «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերը նշված հիմքերը, արձանագրում է, որ Ընկերությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն Պատվիրատուի՝ ***t.abrahamyan@mil.am***, էլեկտրոնային փոստի հասցեից ***04.09.2017թ.*** ստացված ծանուցմանն ի պատասխան՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման

պահանջներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, ***07.09.2017թ.*** սահմանված ժամկետում և կարգով Պատվիրատուին է ներկայացրել Ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, որին ի հավաստումն Ընկերությունը 12.10.2017թ. գրությանը կից Խորհրդին է ներկայացրել ***Ընկերության՝ nune@compserv.am, էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի՝ t.abrahamyan@mil.am, էլեկտրոնային փոստի հասցեին 07.09.2017թ. որակավորման փաստաթղթերը ուղարկելու փաստը հավաստող էլեկտրոնային փոստի արտատպումը,*** հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանն այս հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 09.10.2017թ. թիվ 03/26-3/18255-17 գրությամբ «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02508699) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ